«ՕՂԱԿ» ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ-ԱՇԱԲԵԿՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ի. Վ.

«Օղակ» գործողությունը ռազմական միջոցառումների համալիր ծրագիր էր, որը միտված էր հայ-ադրբեջանական հակամարտությունը բռնի, ուժային մեթոդներով լուծելուն: Այն իրականացվեց 1991 թ. գարնան-ամռան ամիսներին՝ ԽՍՀՄ և Ադրբեջանի ԽՍՀ կառավարությունների համատեղ ջանքերով և հանգեցրեց Հյուսիսային Արցախի գյուղերի հայաթափմանը: Խորհրդային պատմության մեջ էթնիկական զտման տեսանկյունից աննախադեպ այս ռազմական գործողությունն ադետալի շարունակական ընթացք ունեցավ Շահումյանում և բուն Լեռնային Ղարաբաղում: 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին քսանյոթ օր տևած «Օղակ» կոչվող ռազմական գործողության առաջին փուլով Գետաշենի ենթաշրջանի գյուղերից սկսվեց Շահումյանի, Շուշիի, Հադրութի և ԼՂԻՄ-ի այլ շրջանների բնակիչների բռնի տեղահանության, հայրենազրկման, սպանությունների, վայրագությունների, թալանի, խոշտանգումների գրեթե 4 ամիս տևած գործողությունը, որը կատարվեց մի քանի փուլով և շարունակվեց ընդհուպ մինչև 1991 թ. օգոստոսի 20-ը:

1990 թ. ապրիլի 3-ի՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը[1] նախատեսում էր ազգային ինքնավարություններին իրավունք տալ ինքնուրույն կերպով որոշելու սեփական պետահրավական կարգավիճակը ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում: Ինքնավար կազմավորումների կողմից սեփական պետահրավական կարգավիճակի հարցի որոշման կարգը, ըստ այդ օրենքի 3-րդ հոդվածի, սահմանվում էր այսպես. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուգներ ունեցող միութենական հանրապետությունում առանձին հանրաքվե է անցկացվում յուրաքանչյուր ինքնավարությունում: Ինքնավար հանրապետությունների ու ինքնավար կազմավորումների ժողովուրդներին իրավունք է վերապահվում ԽՍՀՄ կազմում կամ անջատվող միութենական հանրապետության կազմում մնալու մասին հարցը ինքնուրույն որոշել, ինչպես նաև իր պետահրավական կարգավիճակի մասին հարց բարձրացնել: Այն միութենական հանրապետությունում, որի տարածքում կան տվյալ վայրի բնակչության մեծամասնությունը կազմող և հոծ բնակվող ազգային խմբեր, հանրաքվեի արդյունքների որոշման ժամանակ քվեարկության արդյունքներն այդ վայրերում առանձին են հաշվառվում»[2]: Օրենքից բխող անցանկալի հետևանքներից խուսափելու միակ ելքը ԼՂԻՄ-ի և շրջակա տարածքների հայազգի բնակչությանը տեղահանելն

---

[1] *О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР, Закон Верховного Совета СССР, 3 апреля 1990 г., N 1409-I (ВВСС 90-15): Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990, N 15, с. 252.*

[2] *Նույն տեղում:*

էր, որն իրագործելու համար խորհրդային և ադրբեջանական իշխանությունների համատեղ ջանքերն ուղղվեցին ԼՂԻՄ-ում և շրջակա տարածքներում ժողովրդագրական պատկերի փոփոխմանը:

Ռազմական հարձակումներին զուգընթաց Ադրբեջանի ԽՍՀ-ը դիմեց տնտեսական հարկադրանքի միջոցների և խզեց բոլոր տեսակի ապրանքամատակարարումները, որոնք ԼՂԻՄ և շրջակա հայկական բնակավայրեր հասնում էին հիմնականում Ադր. ԽՍՀ-ի տարածքով: Տնտեսական շրջափակման հետևանքով Արցախ-Ղարաբաղը հայտնվեց բացարձակ մեկուսացման մեջ, իսկ Գետաշենի ենթաշրջանը՝ կրկնակի շրջափակման: Երբ 1991 թ. հունվարին Ադր. ԽՍՀ գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին հարակից հայկական Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը միացնել հարևան 50 հազար ադրբեջանական բնակչություն ունեցող Կասում-Իսմայիլի շրջանին՝ կազմավորելով նոր Գերանբոյի շրջան և վերջնականապես վերացնելով Շահումյանի շրջանը[3], դրան անմիջապես հաջորդեց ադրբեջանական Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատների՝ ՄՀՆՋ-ի (ռուս.՝ ОМОН) կուտակումը Գետաշենի և Մարտունաշենի սահմաններին, և որոնց պատասխանատուները ներկայացրեցին գյուղերը դատարկելու մասին հերթական ապօրինի պահանջը: Սակայն Շահումյանի շրջանի (1991 թ. 20 հազ. բնակչից 82%-ը՝ հայեր) և Գետաշենի ենթաշրջանի բնակչությունը չհամաձայնվեց միանալ Կասում-Իսմայիլի շրջանին[4]:

Ապրիլի 30-ի արյունոտ դեպքերին նախորդած մեկուկես տարվա ընթացքում ԼՂԻՄ-ում արտակարգ իրավիճակի ռեժիմի անվան տակ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության թողտվությամբ և օժանդակությամբ Ադրբեջանի կուսակցական և խորհրդային ղեկավարության կողմից իրագործված հակահայկական քաղաքականության հետեվանքով վերացվեցին իշխանության տեղական մարմինները, և կառավարումը հանձնվեց «ԼՂԻՄ-ի գծով Ադր. ԽՍՀ կազմկոմիտեին»՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Հենվելով Ադր. ԽՍՀ ղեկավարության ենթակայության տակ գտնվող՝ արտակարգ դրության շրջանի (ԼՂԻՄ և Ադր. ԽՍՀ հարակից հայկական շրջաններ) ռազմական պարետության ներքին զորքերի վրա՝ Կազմկոմիտեն դարձավ Բաքվի կամակատարը՝ Լեռնային Ղարաբաղի հայության դեմ լայնածավալ ահաբեկչության կազմակերպման գործում:

Հայկական գյուղերի ոչնչացման գործողությունը ծրագրվեց Բաքվում Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի կողմից հրավիրված խորհրդակցության ժամանակ, 1991 թ. ապրիլի 16-ին: «Անձնագրային ռեժիմի ստուգում»

---

[3] **Шевелев М.** *Шаумяновский район – война по просьбам трудящихся? (Московские новости, 3.II.1991).*

[4] **Աբրահամյան Հ.,** *Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, 2007, էջ 248-249:*

ձևակերպման ներքո իրականացվեց պետական ահաբեկչության աննախադեպ գործողություն, որն ուղեկցվեց թալանով, խաղաղ բնակիչների՝ այդ թվում՝ ծերերի և երեխաների սպանություններով ու այլ տարաբնույթ հանցագործություններով:

Վ. Կրիվոպուսկովի[5] տվյալներով, դեռևս 1990 թ. նոյեմբերին Քննչական-օպերատիվ հատուկ խմբի ձեռքում հայտնվեցին Ադրբեջանի կառավարության գաղտնի փաստաթղթերը, այդ թվում՝ նաև Շահումյանի և նախկին Խանլարի շրջանների գյուղերից հայ բնակչության բռնի տեղահանության ծրագիրը, որոնք այն ժամանակ Կրիվոպուսկովը հանձնեց ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ. Պուգոյին: «Մեր նախարարության ղեկավարությունից չէր կարող վրիպել այն, որ Ադրբեջանական ԽՍՀ գերագույն խորհրդի նստաշրջանում, որը տեղի ունեցավ 1991 թ. փետրվարին, հանրապետությունից հայ բնակչության տեղահանության ծրագիրը փաստորեն հավանության արժանացավ»[6]:

1991 թ. փետրվարին հանդես գալով Բաքվում, Ադր. ԽՍՀ գերագույն խորհրդի նստաշրջանում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար և ԼՂԻՄ-ի Կազմկոմիտեի նախագահ Վ. Պոլյանիչկոն հայտարարեց. «1991 թվականը կհայտարարվի Ղարա-բաղի տարի: Այդ տարին Ադրբեջանի համար վերջին դժվար տարին կլինի: Ղարաբաղի հողը մերն է, և այն մենք պետք է նվաճենք մեր երեխաների համար: Օդանավակայանն արդեն մերն է: Բայց անհրաժեշտ է ավելացնել օմօնականների քանակը…»[7]: Իսկ Ադրբեջանի ՆԳ նախարար Մ. Ասադովի ելույթում քաղաքական նույն ձևակերպումն ամրապնդվեց ուժայինով. «Օմօնականների կազմը շուտով կհամալրվի և կհասցվի 600 մարդու: Իսկ Լեռնային Ղարաբաղի մերձակա շրջաններում տեղակայված է տասը հազարանոց բանակը: Այնպես որ Ղարաբաղ մտնելը և այն գրավելը տեխնիկայի գործ է»[8]:

Նույն նստաշրջանում ելույթ ունեցավ նաև Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր և ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի նորընտիր անդամ Հեյդար Ալիևը: Նա ներկայացրեց ազգամիջյան խնդիրները լուծելու «սեփական պատմական փորձը» և պաշտպանեց առաջարկվող ծրագրերը: Հ. Ալիևը հպարտությամբ նշեց, որ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար եղած տարիներին ԼՂԻՄ-ի հայ բնակչության քանակը նվազել է, ադրբեջանական բնակչությանը՝ աճել: Իսկ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում ոչ մի հայ չի մնացել:

ԼՂԻՄ-ի շրջակա հայկական բնակավայրերում սկսվեց բացահայտ զինված ճնշումը: Անձնագրային ռեժիմի ստուգման գործողություններում Բաքուն համառորեն պահանջում էր ընդգրկել ավելի մեծ թվով զորքեր, հատկապես,

---

[5] *Վիկտոր Վլադիմիրովիչ Կրիվոպուսկովը 1990-1991 թթ. ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ ՆԳՆ Քննչական-օպերատիվ հատուկ խմբի շտաբի պետն էր:*

[6] **Кривопусков В.** *Мятежный Карабах, М., 2007, с. 201.*

[7] *Նույն տեղում:*

[8] *Նույն տեղում:*

ներգրավել ԽՍՀՄ զինված ուժերի բանակի 23-րդ դիվիզիան, որի հրամանատարը՝ գեներալ Բուդեյկինը, գործում էր Ադրբեջանի ղեկավարության հրահանգներով:

Ըստ Կրիվոպուսկովի՝ «Մութալիբովը և Պոլյանիչկոն չհապաղեցին օգտվել Մոսկվայի և Հայաստանի նոր ղեկավարների միջև փոխհարաբերությունների փաստացի բացակայությունից, իսկ Հայաստանի ղեկավարությունը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, չունենալով քաղաքական և պետական փորձ, գտնվելով իշխանության համար պայքարում հաջողության հասածի էյֆորիայի վիճակում, չէր շտապում միութենական կենտրոնի հետ գործնական կապի մեջ մտնել: Իրականում այդ ժամանակ Ղարաբաղյան շարժումը մնացել էր առանց ՀԽՍՀ ղեկավարության ռեալ աջակցության: Իսկ Ադրբեջանը չէր թուլացնում ճնշումը»[9]:

1991 թ. ապրիլի 9-ին Ստեփանակերտում սկսված, բայց գեներալ-գնդապետ Գրոմովի պահանջով անսպասելիորեն ընդհատված և ապրիլի 10-ին Բաքվում շարունակված գաղտնի խորհրդակցության մասին Վ. Կրիվոպուսկովը գրում է. «Առավոտյան ժամը 8.30-ից Գրոմովն առանձնազրույց ունեցավ Ադրբեջանի նախագահ Մութալիբովի հետ: Ապա նրանց միացան Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատարի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Գրեկովը, Անդրկովկասյան սահմանապահ օկրուգի պետ գեներալ-մայոր Պետրովը, 4-րդ բանակի հրամանատար գեներալ-մայոր Սոկոլովը, ԽՍՀՄ դատախազության ներկայացուցիչ Մոլոդինսկին, որի հետ նա քննարկում էր հանրապետության սահմաններն ամրապնդելու և ԼՂԻՄ-ում կարգ հաստատելու լրացուցիչ միջոցների հարցը»[10]:

1991 թ. փետրվարի վերջին Ադր. ԽՍՀ Խանլարի շրջանի Հաջիքենդի հատվածում քննարկման դրվեց Գետաշենը և Շահումյանը գրավելու ծրագիրը՝ «Օղակ» ռազմական գործողությունը: «Մի քանի ժամ դրանից անց ես արդեն գիտեի նախապատրաստվող գործողության մասին և այդ մասին հայտնեցի Հայաստանի ղեկավարությանը, բայց ոչ մի միջոց չձեռնարկվեց»[11],- խոստովանում է Վլադիմիր Աղաջանյանը, որը եղել է Շահումյանի շրջկոմի առաջին քարտուղարը մինչև 1991 թ. հունիս ամիսը:

Ապրիլի 16-ին Բաքվում կայացած խորհրդակցությունում Այազ Մութալիբովն իրավապահ մարմիններին՝ ՊԱԿ-ին, ՆԳՆ-ին և Դատախազությանը կոչ արեց բռնի ուժով տեղահանել Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի բնակիչներին, եթե նրանք չենթարկվեն Ադրբեջանի սահմանադրությանը: Անդրադառնալով կոչին՝ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն ասաց. «Ինչի՞ կհանգեցնի նման քաղաքականությունը: Պետք է ասել, որ վերջին տարվա ընթացքում տարածաշրջանում հաստատվել է որոշակի ստատուս քվո: Եվ այսօր իրավիճակի կայունացման ցանկացած փորձ ապարդյուն կլինի, եթե այդ ստատուս քվոն խախտվի. նկատի ունեմ առաջին հերթին հայկական Շահումյանի շրջանի,

---

[9] *Նույն տեղում, էջ 202:*

[10] *Նույն տեղում, էջ 256-257:*

[11] *Հայաստանի զրուցակից, 18.VI.2008, www.sobesednik.am*

Գետաշենի ենթաշրջանի և Բերդաձոր գյուղի ճակատագիրը»[12]: Ռուս հեղինակ Վ. Զախարովը այդ մասին նշում է. «Երբ որոշումը կենտրոնից հասավ Ղարաբաղ, ԼՂԻՄ հատուկ շրջանի պարետությանը կցված՝ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի անձնակազմի ղեկավարությունը փորձեց բողոքել: 1991 թ. ապրիլի 18-ին անձնակազմի ընդհանուր ժողովում ընդունվեց հայտարարություն՝ Մ. Գորբաչովի, Լ. Տեր-Պետրոսյանի, Ա. Մութալիբովի, Վ. Կրյուչկովի և Բ. Պուգոյի անունով՝ պահանջելով քաղաքական լուծում տալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին: Սակայն ո՛չ Գորբաչովը, ո՛չ Կրյուչկովը, ո՛չ Պուգոն, ո՛չ էլ առավել ևս Մութալիբովը, զինվորականներին չպատասխանեցին: Այո՛, առաջին հերթին հենց այս մարդիկ են մեղավոր «Օղակ» ռազմական գործողության համար, որի հետևանքով հեղվեց անմեղ մարդկանց, երեխաների արյունը»[13]:

Խորհրդակցությանը ներկա ԽՍՀՄ ՆԳ նախարարի առաջին տեղակալ գեներալ-գնդապետ Բ. Գրոմովը պաշտպանեց բռնի տեղահանման «Օղակ» գործողության իրականացման վերաբերյալ առաջարկը, «ավելի ճշգրիտ՝ տասնյակ հազարավոր մարդկանց բռնի տեղահանությունը Խանլարի շրջանի հայաբնակ Գետաշեն և Մարտունաշեն գյուղերից, ամբողջ Շահումյանի շրջանից, ինչպես նաև ԼՂԻՄ Հադրութի շրջանից և Շուշիի շրջանի հինգ հայական գյուղերից: Հավանաբար, Ադրբեջանի ղեկավարներին և, հատկապես, անձամբ Պոլյանիչկոյին, հաջողվել էր տպավորել գեներալ Գրոմովին, այնպես, որ նա հավատացել էր սեփական երկրի քաղաքացիների՝ հայերի, դեմ ահաբեկչական մեթոդների կիրառման արդարացիության մեջ: Վերադառնալով Մոսկվա՝ գեներալ-գնդապետ Գրոմովը գլխավորեց իր ծավալով, դաժանությամբ և աֆղանացված բովանդակությամբ նախադեպը չունեցող «պրոֆիլակտիկ» գործողությունը Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի դեմ»[14]: Հարցազրույցներ-ից մեկում, արդարացնելով իր գործողությունները, նա նույնիսկ սպառնաց՝ ասելով, որ «կշրջափակեն Ղարաբաղը «Բեռլինյան պատով»[15]:

ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի մշտական կայազորը, որը տեղակայված էր Գետաշենում, փոքրաթիվ էր և մասամբ կարող էր վերահսկել իրավիճակը: «ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի կողմից մի քանի անհաջող փորձեր եղան հայտնաբերելու Թաթուլ Կրպեյանին, որը ղեկավարում էր ենթաշրջանի ինքնապաշտպանությունը: Վերջին անգամ մարտ ամսին նրանք ավելի քան 80 զրահամեքենաներով շրջապատեցին գյուղը և պահանջեցին իրենց հանձնել գյուղական ուսուցիչ Թաթուլ Կրպեյանին և գյուղում առկա զենքն ու զինամթերքը»[16]: 1991 թ. ապրիլի 10-ին Ադրբեջանի Հանրապետության

---

[12] Հայաստանի Հանրապետություն, 10.V.1991:

[13] **Захаров В. А.** *"Операция Кольцо" -20 лет спустя, 5.V.2011, http://bs-kavkaz.org*

[14] **Кривопусков В.**, *նշվ. աշխ., էջ 201:*

[15] *Տե՛ս* **Бабанов И., Воеводский К.** *Карабахский кризис, СПб., 1992, с. 45-51.*

[16] *Ականատեսների վկայությունների մասին տե՛ս* **Բարսեղյան Ի.,** *Թաթուլ Կրրպեյանը և «Օղակ» գործողությունը (ՀՀ ԳԱԱ Լրաբեր Հասարակական գիտությունների, 2011, N 3):*

Պաշտպանության խորհրդի նիստում, ապրիլի 11-ին Ադրբեջանի Հանրապետության գերագույն խորհրդի նախագահության նստաշրջանում և ապրիլի 16-ին Ադրբեջանի Հանրապետության նախագահ Մութալիբովի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում, հավանության արժանացած և ընդունված՝ ԼՂԻՄ-ի և շրջակա մի շարք բնակավայրերից հայ բնակչության բռնի տեղահանության ծրագրի շրջանակում տեղահանության գործողությունների ղեկավարումը հանձնարարվեց Ադր. ԽՍՀ ներքին գործերի նախարար Մ. Ասադովին: Այն, որ Ադրբեջանի ղեկավարության ծրագրած լայնածավալ գործողությունների նախագիծը համաձայնեցված էր ԽՍՀՄ ՆԳՆ-ի, ՊԱԿ-ի և Պաշտպանության նախարարության ղեկավարների հետ, ապացուցում են ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովին նրանց կողմից ուղարկված առաջարկ-հանձնարարականները, որոնցում հստակ շեշտադրում կար հակամարտությունն ուժային մեթոդներով լուծելու, ԼՂԻՄ-ի շրջափակումը ուժեղացնելու և գրոհայինների դեմ պայքարը խստացնելու ուղղությամբ: «Ղարաբաղի հայ բնակչության համատարած էթնիկական զտումները կատարվեցին ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովի և Ադրբեջանի գերագույն խորհրդի նախագահ Ա. Մութալիբովի սանկցիայով»[17],- համոզված է բարոնուհի Քերոլայն Քոքսը:

Հատկանշական է, որ 1991 թ. ապրիլի 19-ին ԼՂԻՄ-ի արտակարգ դրության շրջանի զինվորական պարետությունը ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի հրամանատարությունից հրաման ստացավ անհապաղ դուրս բերել այն ստորաբաժանումները, որոնք կոչված էին պաշտպանելու Գետաշեն և Մարտունաշեն գյուղերը[18]: Ապրիլի 19-ի լույս 20-ի գիշերը ժամը 3.00-ին ԼՂԻՄ-ի հատուկ շրջանի պարետության ստորաբաժանումները հեռացան Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի տարածքից[19]: Նրանց փոխարինելու եկան ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի Բաքվի գնդի ստորաբաժանումները՝ գնդապետ Մաշկովի հրամանատարությամբ: Հայ ազգաբնակչությունը հայտնվեց ադրբեջանական ՕՄՕՆ-ի թշնամական շրջափակման օղակի մեջ: Դադարեցվեց էլեկտրամատակարարումը, անջատվեց հեռախոսակապը, արգելվեցին ուղղաթիռային թռիչքները: Գետաշենի և Մարտունաշենի վրա թշնամական հրետակոծությունն ուժեղացավ և դարձավ հաճախակի: Դրան հաջորդեցին ապրիլի 21-ին և 23-ին տեղի ունեցած հայտնի զինված ընդհարումները[20]: Ապրիլի 21-ին ՕՄՕՆ-ի ջոկատները հարձակվեցին Գետաշենի և Մարտունաշենի վրա, սակայն անհաջողության մատնվեցին, «որից հետո գլխավոր դերը վերջնականապես հատկացվեց ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի և բանակի ստորաբաժանումներին»[21]:

---

[17] **Cox C.** *and* **Eibner J.**: *Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh; Institute for Religious Minorities in the Islamic World; Zurich, London, Washington, 1993, pp. 32-47.*

[18] **Կրպեյան Թ.,** *Գետաշենյան օրագիր, հեղինակի անձնական արխիվ:*

[19] *Նույն տեղում:*

[20] **Բարսեղյան Ի.,** *նշվ. հոդվ.: Տե՛ս նաև ականատեսների վկայությունները (հեղինակի անձնական արխիվ):*

[21] *Նույն տեղում:*

Ապրիլի 30-ին Ադր. ԽՍՀ ՆԳՆ ՄՀՆՋ-ն Կիրովաբադում տեղակայված խորհրդային 4-րդ բանակի Բաքվի 23-րդ մոտոհրաձգային դիվիզիայի ստորաբաժանումների հետ, ուղղաթիռներով, զրահամեքենաներով, տանկերով զինված, Գետաշեն-Մարտունաշենից սկսեցին Լեռնային Ղարաբաղում հայերի բռնի տեղահանման գործողությունը: Ադրբեջանական ՕՄՕՆ-ի ստորաբաժանումները և հարևան ադրբեջանական գյուղերի աշխարհազորային խմբավորումները հետևում էին կանոնավոր զորքին[22]: Մայիսի 1-ին բանակի և ներքին զորքերի կողմից պաշարված Գետաշենում ԽՍՀՄ ՆԳՆ ներկայացուցիչը գյուղացիներին ներկայացրեց «բնակության վայրը կամավոր փոխելու» մասին փաստաթղթեր, որոնցից մեկը ստորագրել էին Ադրբեջանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Ռ. Մամեդովը և ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Ե. Միշինը, իսկ երկրորդը՝ Խանլարի շրջգործկոմի նախագահ՝ Ն. Մամեդովը: Փաստաթղթերում Հատուկ շրջանի պարետության անունից, որի ստորաբաժանումները Գետաշենը լքել էին ապրիլի 15-ին, նրանք երաշխավորում էին «օրենքի խիստ պահպանումով» ապահովել Գետաշենի և Մարտունաշենի բնակչության իրավունքները «սեփական տների վաճառքի փաստաթղթերի ձևակերպման գործում» և «տեղափոխության անվտանգությունը տեղահանության ընթացքում»[23]: Ասվում էր նաև, որ բոլոր գործողությունները համաձայնեցված են ԽՍՀՄ ՆԳՆ-ի հետ:

ԽՍՀՄ ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ Բ. Գրոմովը դեռևս ապրիլի 6-ին Մոսկվայից ժամանել էր էթնիկ լարվածության շրջան և գաղտնի հանդիպում ունեցել Վ. Պոլյանիչկոյի հետ, այս փաստը կրկին հաստատում է ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության հանցավոր համագործակցությունը և անմիջական ներգրավվածությունը էթնիկ զտումների իրականացման Ադրբեջանի շարունակական քաղաքականությանը, որում տվյալ փուլում հատուկ դերակատարություն ունեցան Գրոմովը և Պոլյանիչկոն, որոնք դեռևս խորհրդա-աֆղանական պատերազմի տարիներից սերտ համագործակցության փորձ ունեին. առաջինն Աֆղանստանում խորհրդային բանակի ստորաբաժանումների հրամանատարն էր, երկրորդը՝ 1985-1988 թթ. այդ երկրի ղեկավարներ Բաբրակ Քարմալի և Նաջիբուլլայի քաղաքական խորհրդականը[24] և համարվում է Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետությունում, այսպես կոչված՝ «ազգային հաշտեցման» տիրահռչակ քաղաքականության տեսաբաններից ու մշակողներից մեկը:

Ադրբեջանի ղեկավարությանը և անձամբ Պոլյանիչկոյին հաջողվեց տպավորություն թողնել և համոզել գեներալ Գրոմովին հայերի՝ ԽՍՀՄ լիիրավ

---

[22] *Մանրամասնությունները տե՛ս* **Բարսեղյան Ի.,** *նշվ. հոդվ.:*

[23] *Տե՛ս Заключение Комитета ВС РСФСР по правам человека по итогам слушаний, посвященных нарушению прав человека в районе вооруженного конфликта в ряде районов Азербайджанской Республики и Республики Армения (конец апреля-май 1991 года).* www.sumgaitiifo

[24] *Տե՛ս Ազգ, 2.V.2006:*

քաղաքացիների դեմ կիրառվելիք ահաբեկչական մեթոդների արդարացիության մեջ[25]: 2000 թ. մայիսի 30-ին տված հարցազրույցում Ա. Մութալիբովը խոստովանեց, որ «գրոհայիններին վերացնելու» գործողության ծրագիրը թղթի վրա գոյություն ուներ դեռ 1989 թվականից և մնում էր միայն իրագործել: Նա անկեղծորեն պատմում էր, թե ինչպես իրեն հաջողվեց համոզել Կրեմլին այդ գործողության նպատակահարմարության վերաբերյալ. «Ես իրողությունը ներկայացրեցի քաղաքական եզրույթներով. չէ՞ որ ես գիտեի, թե ինչպես է պետք աշխատել Մոսկվայում»[26]:

Գեներալ Ալ. Կուտիկովը[27] հաստատում է այն փաստը, որ իրենք կատարել են «զինաթափման ծրագիրը», այդ ձևով փորձելով արդարացնել կատարվածը, երբ գյուղերի տարածք մտցվեցին ծանր զրահատեխնիկա՝ հրասայլեր, ռազմական ռմբարկու ուղղաթիռներ, ավտոմատներով և հրանոթներով զինված բանակային ստորաբաժանումներ, որոնց կրնկակոխ հետևում էր ադրբեջանական ՄՀՆՋ-ն՝ կացիններով, թալանի համար նախատեսված պարկերով, պատրաստ՝ ի կատար ածելու բռնի տեղահանման հրամանը՝ խտրականություն չդնելով միջոցների մեջ: Դա իսկական ռազմական գործողություն էր, ըստ ամենայնի ծրագրված և նախապատրաստված: Ասվածը հաստատում է նաև ԽՍՀՄ ներքին զորքերի գեներալ-մայոր Վալերի Պետրովիչ Ստարիկովը[28]: Ականատեսների վկայությամբ և Թաթուլ Կրպեյանի արխիվում պահվող գրավոր ու ձայնագրված փաստերով հերքվում է նաև Կուտիկովի մյուս ստահոդ հայտարարությունը, թե, իբր, «զինվորականներն օգնել են հայ բնակչությանը»[29]:

Քաղաքական գործիչներից և տեսաբաններից շատերը համոզված են, որ «Օղակ» ռազմական գործողությամբ Մ. Գորբաչովը պատժում էր ՀԽՍՀ իշխանություններին համամիութենական հանրաքվեին չմասնակցելու համար: «Գետաշենը նվեր էր Ադրբեջանին՝ Հայաստանին պատժելով,- 1991 թ. մայիսի 12-ին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ՀՀ նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը:- Իրադարձությունները տեղի ունեցան Գետաշենում, որովհետև այն անընդհատ փշի նման անհանգստացնում էր Ադրբեջանի իշխանություններին, և նրանք ծրագրում էին ազատել Գետաշենը, կազմակերպել տեղահանությունը: Այդ նվերը նրանց տրվեց: Այն, ինչ կատարվեց Գետաշենում, սարսափելի էր ու անմարդկային»[30]:

---

[25] **Кривопусков В.**, *նշվ. աշխ., էջ 256:*

[26] *Ayaz Mutalibov's interview: Thomas de Waal: Armenia and Azerbaijan through Peace and War, New York, 2003, pp. 143-164.*

[27] *Ալեքսանդր Կուտիկովը Կիրովաբադում (Գանձակ) տեղակայված ԽՍՀՄ ներքին զորքերի 23-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարի (Ն. Բուդեյկին) տեղակալն էր (տե՛ս Эпоха, 23.V.1991):*

[28] **Кривопусков В.**, *նշվ. աշխ., էջ 253-267:*

[29] *Ականատեսների վկայություններ, ձայնագրություններ (հեղինակի անձնական արխիվ):*

[30] *Հայաստանի Հանրապետություն, 18.V.1991: Տե՛ս նաև* **Մանուկյան Վ.**, *Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Ելույթներ և հոդվածներ, Ժողովածու, Ե., 2002, էջ 78:*

Գետաշենը վերջնականապես ցույց տվեց, որ Ադրբեջանի հետ խաղաղությամբ համաձայնության հասնել հնարավոր չէ: Հայ ժողովուրդն սկսեց պատրաստվել ազատագրական պատերազմի: Արցախյան հակամարտությունը թևակոխեց նոր՝ ռազմական փուլ: 1992 թ. հունիս-օգոստոս ամիսներին 23-րդ դիվիզիան վերջին անգամ «օգնություն» ցույց տվեց Ադրբեջանին, օկուպացնելով և Ադրբեջանին հանձնելով ԼՂՀ Շահումյանի շրջանը և Մարտակերտի շրջանի մեծ մասը: «Օղակ» ռազմական գործողությունը նշանավորեց դարաբաղյան հակամարտության բացահայտ, ռազմական փուլի սկիզբը: Այն դարձավ «խորհրդային շրջանի առաջին ու վերջին քաղաքացիական պատերազմը»[31], որին խորհրդային բանակի զորամասերը մասնակցեցին խորհրդային տարածքում:

1991 թ. մայիսի 16-ին տեղի ունեցած՝ ՀՀ գերագույն խորհրդի նախագահության՝ «Հանրապետությունում և Արցախում ստեղծված իրավիճակի մասին» օրակարգով արտահերթ լիագումար նիստում ընդունվեց «Հայտարարություն Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի դեմ պետական ահաբեկչության քաղաքականության գնահատման մասին», որով ՀՀ գերագույն խորհուրդը կատարվածը որակեց «որպես պետական ահաբեկչության քաղաքականության հիման վրա իրականացվող ագրեսիա»[32]:

ГОСУДАРСТВЕННО-ТЕРРОРИСТИЧЕСКИЙ ХАРАКТЕР ВОЕННОЙ ОПЕРАЦИИ “КОЛЬЦО”

БАРСЕГЯН И. В.

Резюме

Военная операция “Кольцо” (30.04-20.08.1991) была осуществлена силами Внутренних войск МВД СССР и спецназа милиции МВД Азербайджанской ССР, а также подразделениями 23-й дивизии (расположенной в г. Кировабад) 4-й армии МО СССР. В ходе этой операции население армянских сел Геташен и Мартунашен района Ханлар Азербайджанской ССР и ряда сел района Шаумян и АО Нагорный Карабах было депортировано. Депортация армян Арцаха была организована президентом Азербайджанской ССР Аязом Мутали-бовым и вторым секретарем ЦКП Азербайджана В. Поляничко. А. Муталибов согласовывал программу действий с президентом СССР М. Горбачевым, который несет ответственность за депортацию и резню в Арцахе. В принятии решения о выполнении военной операции “Кольцо” лично участвовали министр ВД СССР Б. Пуго, начальник КГБ СССР В.

[31] **Tomas de Waal.** *Black Garden; Armenia and Azerbaijan through Peace and War. New York and London, 2003, pp.110-111.*

[32] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, ց. 62, գ. 3, Հ.Ն.-0313-1:*

Крючков, министр обороны СССР Д. Язов, а в разработке военной операции участвовал также замминистр ВД СССР генерал Б. Громов. Командир внутренних войск МВД СССР генерал-лейтенант Ю. Шаталин лично контролировал ход операции. Список условных вызовов всех военных подразделений и командирских составов, принявших участие в этой операции, похищенный у командира бакинского полка Внутренних войск МВД СССР командиром самообороны Геташенского субрегиона Татулом Крпеяном, является главным доказательным фактом государственно-террористического характера военной операции “Кольцо”.

THE STATE-TERRORISTIC NATURE OF THE MILITARY OPERATION “RING”

I. BARSEGHYAN

Abstract

The “Ring” military operation (30.04-20.08.1991) was implemented by USSR MIA Internal troops and Azerbaijan Police MIA special squads, as well as by the subdivisions of the USSR 4th army’s 23rd division (situated in Kirovabad city), which was under the supervision of Azerbaijan SSR. During this operation, the residents of the Armenian villages Getashen and Martunashen of Azerbaijan SSR region and those living in a number of Armenian villages of Shahumyan region and Nagorno-Karabakh Autonomous Region were deported. The deportation of Artsakh Armenians was organised by Azerbaijan SSR president Ayaz Mutalibov and Azerbaijan Communist Party second secretary V. Polyanichko. A. Mutalibov had agreed the plan of actions with the USSR president M. Gorbachev, who is to be blamed for the deportation and massacres in Artsakh.

USSR IA minister B. Pugo, USSR CSS president V. Kryuchkov, USSR Military minister D. Yazov also contributed to this decision making.. General B. Gromov personally participated in military action planning works, whereas USSR MIA Internal troop commander major-general U. Shatalin supervised the process of the operation. Getashen subregion self-defence commander Tatul Krpeyan obtained the list of conventional calls of those military subdivisions and commanding officers, who had participated in the operation. This list proves the terroristic nature of the “Ring” military operation.